

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Oqnuտոս*

*2022թ.*

Յ Գորիս Տ

**31.08.2022 թ.**

**Մեղրու արաքսամերձ գյուղերում, ոռոգման ջրի սակավության պատճառով, վտանգված է բերքը՝ գյուղացիների ապրուստի միակ միջոցը**

Մի քանի օր է՝ Մեղրու արաքսամերձ գյուղերից ահագանգ ենք ստանում՝ ոռոգման ջրի աննախադեպ նվազման և այդ պատճառով՝ ընթացիկ տարվա բերքը փչացման վտանգի առջև հայտնվելու մասին...

Օգոստոսի 30-ին այդ բնակավայրերում հանդիպումներ ունեցանք ոչ միայն բնակիչների, այլև համայնքային իշխանության ղեկավարների, «Սյունիք» ՋՕԸ-ի Մեղրու մասնաճյուղի պատասխանատուների հետ...

Մեղրու տարածաշրջանում այս օրերին, առանց չափազանցության, բոլորի խոսակցության թեման ոռոգման համակարգում ստեղծված խայտառակ վիճակն է, այգիներին սպառնացող վտանգը...

Վարդանիձոր գյուղի մերձակայքում տեղակայված ԱԻՆ-ի ամառային սպասարկման կետում, որտեղ առավոտյան հանդիպեցինք համայնքի ղեկավար Բագրատ Չաքարյանին և «Սյունիք» ՋՕԸ-ի պետի տեղակալ Ալեքսան Օհանջանյանին, մարդիկ այդ խնդիրն էին քննարկում:

Քննարկումներն ավելի թեժ էին Շվանիձորի պոմպակայանի մերձակայքում, որտեղ տեխնիկայի օգնությամբ, նաև ձեռքի աշխատանքով փորձում էին Արաքսի ջուրը՝ փոքրիկ ջրանցքի միջոցով, մոտեցնել պոմպակայանին:

Օրվա վերջին, երբ արդեն վերադառնում էինք Շվանիձորից, Արաքսաշենի բնակիչները դարձյալ ջրի հարցն էին քննարկում և Բագրատ Չաքարյանից լուծումներ պահանջում՝ քաջատեղյակ լինելով նաև, որ խնդիրը դուրս է համայնքային իշխանության գործառույթներից:

**Ինչո՞ւ են մեղրեցիները և հատկապես արաքսամերձ գյուղերի ջրօգտագործողներն այդքան անհանգստացած:**

Միայն մեկ փաստ՝ 40 և ավելի ջերմաստիճանի պայմաններում որոշ այգիներ ջրի երես չեն տեսնում 26 օր շարունակ, որովհետև... հերթն իրենց չի հասնում:

Եվ ամիսների չարչարանքի, ծախսերի արդյունք միրգը, որ այդ գյուղերի բնակիչների ապրուստի միակ միջոցն է, փչացման ստույգ վտանգի առջև է հայտնվել:

Իրավիճակն արդեն իսկ բացասական անդրադարձներ է ունեցել բերքի և ընդհանրապես այգիների վրա:

Շվանիձորցի երիտասարդն է դիտարկում՝ «Եվս նման 10-15 օր, և կունենանք շատ քիչ նուռ, այն էլ՝ անորակ և շուկայում պահանջարկ չունեցող»:

Մեկ ուրիշն էլ հավելում է՝ «Ճիշտ է, թզի բերքն արդեն հավաքել ենք, բայց ծառերը չջրելու դեպքում՝ եկող տարի բերք չեն ունենա»:

Բագրատ Չաքարյանն էլ այդ կարծիքին է՝ ոռոգման ջրի անբավարար մատակարարման հետևանքով այգեգործներն արդեն վնասներ են կրում Ագարակ քաղաքի վերին հատվածում, Նոնաձորում, Արաքսաշենում, Ալվանքում և հատկապես Շվանիձորում:

**Գլխավոր հարցը՝ ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ոռոգման համակարգը չի հասցնում ջուր մատակարարել ջրօգտագործողներին:**

Այդ տարածաշրջանում, խոստովանենք, չտեսնված երաշտ է այս տարի, որի հետևանքով ջրային ռեսուրսների էական նվազման իրողության ենք բախվել:

Մեղրի գետը հիմա մի փոքրիկ ատվակի է նման, իսկ Արաքսը չափազանց սակավաջուր է դարձել...

Իրավիճակն օբյեկտիվ գնահատելու համար փորձեցինք նախ՝ Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Չաքարյանի կարծիքն իմանալ, և ստացանք յուրովի ու ընդհանրական պատասխան՝ **«Այս ամենը ջրային ռեսուրսների վատ կառավարման հետևանք է»:**

«Սյունիք» ՋՕԸ-ի պատասխանատուներն էլ իրենց դիրքորոշումը հայտնեցին:

Ալեքսան Օհանջանյան, «Սյունիք» ՋՕԸ-ի պետի տեղակալ

- Ստեղծված իրավիճակի պատճառը մեկն է՝ սակավաջրություն, Արաքսի ջուրը պակասել է: Օրվա ընթացքում ջրի հոսքը երբեմն այնքան է պակասում, որ չենք հաջողում ջուր վերցնել:

Պոմպերի հետ կապված խնդիր չունենք. Արաքսի վրա ութ պոմպակայան ունենք, բոլորն էլ աշխատում են: Կան նաև 2-րդ աստիճանի պոմպակայաններ, որոնք նույնպես, որոշ բացառությամբ, աշխատում են:

Պոմպերի ընթացիկ նորոգումներն անում ենք տեղում, իսկ լուրջ խնդիրների դեպքում՝ Երևանում:

Իհարկե, պոմպերը, պոմպակայաններն արդիականացման խնդիր ունեն:

Կազմակերպական խնդիրներ էլ չունենք. և «Սյունիք» ՋՕԸ-ի ղեկավար Նաիրի Հովհաննիսյանը, և մյուսներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում Մեղրու տարածաշրջանին:

Ինչ վերաբերում է Մեղրի գետին...

Գետից եկող ինքնահոս ջրատարն աշխատում է՝ Լեհվազից սկսում և Մեղրի-Ագարակ խաչմերուկում բաժանվում է. մի ճյուղը՝ Արաքսաշեն-Ալվանք-Շվանիձոր-Նոնաձոր, մյուս ճյուղը՝ Ագարակ:

Մինչև օգոստոսի 1-ը ինքնահոս այդ ջրատարը նորմալ է աշխատել և, կարելի է ասել, խնդիրներ չենք ունեցել: Դրանից հետո գետը ցամաքել է ու հիմա, ինքներդ կարող եք տեսնել, գրեթե ջուր չի հոսում:

Օգոստոսի 29-ից ստիպված ենք եղել Լեհվազ, Թխկուտ, Վարդանիձոր գյուղերի ռոտզման ջուրը ժամանակավորապես կտրել և ուղղել դեպի Արաքսաշեն...

Գևորգ Առաքելյան, «Սյունիք» ՋՕԸ-ի Մեղրու տեղամասի պետ

- Ալվանքում և Նոնաձորում Արաքսի հոսքը մասնակիորեն անցնում է Հայաստանի տարածքով, և կարողանում ենք, անգամ սակավաջրության դեպքում, ջուրը մոտեցնել պոմպերին և նորմալ ջրամատակարարում ապահովել:

Այլ է խնդիրը Շվանիձորում... Ներկա պահին այդտեղ գործ ունենք Արաքսի ջրային հոսքի աննախադեպ նվազման հետ: Երեկվանից մինչև այսօր, օրինակ, գետի խորությունը կես մետրով պակասել է:

Եվ այդ իրավիճակում պիտի կարողանանք ջուրը մոտեցնել պոմպին. դա է խնդիրը, որ դառնում է մարդկանց դժգոհության, հերթերի պատճառ:

Պոմպի խնդիր չունենք, շարժիչի խնդիր չունենք, խնդիրը միայն ու միայն (այս պահին) Արաքսի սակավաջրության մեջ է:

Ընդ որում՝ Արաքսը բացառիկ տիղմաբեր գետ է, և այդ պայմաններում կարողանում ենք ապահովել պոմպերի անխափան աշխատանքը:

**Հետաքրքիր էր նաև ջրօգտագործողների կարծիքը ստեղծված իրավիճակի վերաբերյալ:**

Հովհաննես Օհանյան, Շվանիձորի բնակիչ

- Գարնանից մինչև օգոստոսի կեսը ոռոգման խնդիրը լուծվել է ինքնահոս ջրամատակարարմամբ (Մեղրի գետից եկող) և գյուղի չորս քահրիզով:

Օգոստոսի 15-ից, հասկանալի պատճառներով, քահրիզները դադարել են ջուր տալ, կանգ է առել նաև ինքնահոս ջրամատակարարումը...

Արդյունքում՝ գյուղացիների տնամերձերը և սեփականաշնորհված 42 հա հողերը մնացել են մեկ պոմպի հույսին՝ ժամում 180 տոննա ջուր թողունակությամբ: Իսկ այդ մեկ պոմպը նույնիսկ ներքևի գոտուն չի բավարարում:

Եթե եղանակային պայմաններն այսպես շարունակվեն և ջրի մատակարարումը շարունակի նվազել, ապա այգիների վիճակն ավելի է վատթարանալու:

Կան այգիներ, որ 26 օր շարունակ ջուր չեն տեսել, ու չգիտենք էլ՝ հերթը երբ է հասնելու:

Այլի Թումանյան, Շվանիձորի վարչական ղեկավար

- Արաքսամերձ գյուղերում բնակավայրերի գոյության գլխավոր պայմանն այգեգործությունն է: Շվանիձորում՝ 78 տնտեսություն, 280 բնակիչ... Այդ ընտանիքների, այդ մարդկանց հույսը 80 հա-ի հասնող ջրովի այգիներն են: Ահա, թե ինչ կարևորություն ունի ոռոգման ջուրը մեր գյուղում...

Շրջանառվող տեսակետը, թե Մեղրու ոռոգման համակարգում ստեղծված վիճակի պատճառներից մեկը Մեղրի գետի վրա կառուցված փոքր հեկերն են՝ լիովին հերքեց այդ ոլորտին քաջատեղյակ Բորիկ Սարգսյանը, ում դիրքորոշմանը հավանություն տվեց համայնքապետը. արդեն 15 օր է՝ այդ հեկերը չեն աշխատում:

Մենք եղանք նաև Ալվանքի պոմպակայանում. իրավիճակն այդտեղ համեմատաբար մտահոգիչ չէ: Պոմպավար Աբել Ոսկանյանի հավաստմամբ՝ «Օրական 17-18 ժամ ջուր ենք տալիս գյուղին, ընտիր բերք է սպասվում, մնում է իրացումը... Անցած տարվա այս օրերին այստեղ կռիվ էր, ջրի կռիվ, «նաստաները» չէին աշխատում: Համայնքապետ Բագրատ Զաքարյանի շնորհիվ գարնանը ջրավազանն է մաքրվել...»:

**Իսկ ո՞րն է ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը՝ հեռանկարային կտրվածքով:**

Որպես հեռանկարային ելք՝ բոլորը միաբերան այն կարծիքն ունեն, որ Մեղրու ջրային խնդրի լուծումը Լիճքի ջրամբարի կառուցումն է: Ի դեպ, այդ խնդիրն օրակարգում է մի քանի տասնամյակ շարունակ՝ դեռևս նախորդ դարի 50-60-ական թվականներից:

Ըստ Բագրատ Զաքարյանի՝ Լիճքի ջրամբարի կառուցումը հանրապետությունում կառուցվելիք ջրամբարների առաջին փուլի ծրագրի մեջ է: Նախատեսվող ջրամբարը կունենա 3 մլն խորանարդ մետր տարողություն, որը կբավարարի Մեղրու կարիքները:

Բորիկ Սարգսյանն էլ ավելացնում է՝ «Մեղրին անսպառ ջրային պաշարներ ունի. գարնանը մեր լեռներից այնքան ջուր է հոսում... Եթե դրա մի մասը հավաքենք ջրամբարում, ապա որևէ խնդիր չենք ունենա: Իսկ ամռանը... Օրերս եղել են Սպիտակ ջուր կամ Ցուրտ ջուր կոչվող վայրում, հիմա այդ լճից վայրկյանում 50-60 լիտր ջուր է դուրս գալիս և մի քիչ ներքև բաժանվում Քաջարանի ու Մեղրու միջև: Գարնանը դրանից հինգ հարյուր անգամ ավելի ջուր է հոսում այդտեղից, ինչն էլ չհավաքել...»:

Հովհաննես Օհանյանն էլ կարծում է, որ խնդիրը կարելի լուծել նաև Ծիրանաձորից (Արաքսի հունը՝ Ագարակի և Օրդուբադի միջև ընկած տարածքում) խողովակով ջուր տեղափոխելով: Բայց հիմնավոր լուծումը ջրամբարն է:

**Ի՞նչ անել այս պահին, չե՞ որ բերքը չորանում է:**

Գյուղացիների մեծ մասի կարծիքով՝ ելքը ջրի մուտքի նկատմամբ ամենօրյա հսկողությունն է, Շվանիձորի դեպքում՝ պոմպակայանի երկրորդ մուտքի ապահովումը:

Ագարակ քաղաքի բնակիչ Աշոտ Մովսիսյանի կարծիքով՝ խնդիրը կարելի է լուծել գետի հունի մեջ՝ պատնեշի օգնությամբ ջրի մակարդակը որոշ տեղերում բարձրացնելով, և դրանով իսկ ջուրը պոմպերին հասցնելով:

Այդ գաղափարն ընդդիմախոսները ողջամիտ չհամարեցին՝ նկատի ունենալով, որ գետի վարարման դեպքում, բույեների ընթացքում, պատնեշը կվերանա:

**Անշուշտ, վերոնշյալ դիտարկումներից յուրաքանչյուրն արժանի է ուշադրության, և մենք չենք պատրաստվում դրանք հերքել կամ բանավեճի առարկա դարձնել:** Այդ բոլորով հանդերձ՝ մի քանի հարց չէր կարող առավել չմտահոգել մեզ:

Նախ՝ Արաքսի ջրային հոսքի աննախադեպ նվազման մասին:

Ջրային ռեսուրսները տնօրինող պետական մարմինները պետք է պարզաբանեն՝ արդյո՞ք սուբյեկտիվ գործոնների արդյունքում է Արաքսի ջուրն ամռան այս տապին էականորեն նվազել: Որոշ մեղրեցիներ այդ երևույթը բացատրում են Նախիջևանի տարածքում հեկերի համար օգտագործվող ջրով, որն այնուհետև չի վերադարձվում գետի հուն:

Հաջորդը՝ այդ ո՞ր մի կոտրած ձեռքն է, որ 2000 թվականից Մեղրու տարածաշրջանի գյուղերի համար սահմանված ռոտզման ջրի զեղչված 5,5 դրամ սակագինը (1 խորանարդ մետրի դիմաց) դարձրել 11 դրամ (բացի Նոնաձորից)՝ թեև ՀՀ կառավարության 2000 թվականի որոշման մեջ, որով սահմանվել էր զեղչը, փոփոխություն չի կատարվել:

Վճարումների հարցը. առկա պարտքերի մասին ստույգ տեղեկություններ չկարողացանք ստանալ: ՋՕԸ-ի Մեղրու պատասխանատուն դրա վերաբերյալ տեղեկություն տալն իր իրավասություններից դուրս հարց է համարում:

Այդուհանդերձ, ինչո՞ւ գյուղացիների զգալի մասը հրաժարվում է վճարել ռոտզման ջրի համար: Ջրօգտագործողներից մեկն այսպես ասաց՝ «Եթե մրգի հասունացման շրջանում ջուր չի տրվում, և միրգը փչանում է, ինչո՞ւ պետք է վճարեմ»:

Մյուս կողմից՝ մարդիկ ուզում են իմանալ՝ ի՞նչ նկատառումով է 2021-ից ջրի սակագնի զեղչը վերացվել:

Մեկ այլ տեսակետ՝ «Մեզանից ջրի վարձը վերցնում են ոչ թե խորանարդ մետրով, այլ ժամանակի կտրվածքով, որը սխալ է: Դրեք ջրաչափ, իմանանք՝ որքան ջուր ենք օգտագործել, և կվճարենք: Իսկ հիմա՝ տալիս են ժամով, ու թե որքան ջուր է այգի հասնում՝ ներքին ցանցի անմխիթար վիճակում, միայն ենթադրել կարելի է»:

Շվանիձորում զարմացած են՝ «Գյուղի ներսի 2-րդ աստիճանի պոմպակայանը 2-3 տարի է՝ չի գործում, ասում են՝ հոսանքի պատճառով: Այդ հարցը չի լուծվում, և ուզում ենք, որ գյուղի վերին գոտին ջո՞ւր հասնի, չի ստացվի»:

Գևորգ Առաքելյանը, ի պատասխան այդ հարցադրումների, արձագանքում է՝ «Ջրաչափմանն անցնելը ճիշտ է, մարդիկ կիմանան, թե կոնկրետ որքան ջուր են ստացել, իսկ

Շվանիձորի 2-րդ աստիճանի պոմպակայանի վերագործարկումը գալիք տարվա ծրագրերի մեջ է»:

Եվս մեկ հարց՝ ոլորտի աշխատողների աշխատավարձը... Ալվանքի բնակիչ Գրիշա Մաթևոսյանը տեղեկացնում է, որ օգոստոսի 15-ից գյուղում ջրբաշխիչ չկա: Որոշ տեղերում էլ, պարզվում է խնդիրներ կան պոմպավարների հարցում: Այսինքն՝ այդ ոլորտում աշխատելը, կարծեք, գրավիչ չէ...

\*\*\*

Այդ ամբողջ լարվածության մեջ, խոստովանենք, չէր կարելի չնկատել և՛ համայնքապետ Բագրատ Զաքարյանի, և՛ ԶՕԸ-ի տեղացի աշխատակիցների եռանդուն գործունեությունը՝ առկա դժվարությունները հնարավորինս մեղմելուն միտված:

Բագրատ Զաքարյանը, իսկապես, գործի մարդ է և իր տեղում է: Նրա նախաձեռնությամբ են գարնանը մաքրվել պոմպակայանների ջրավազանները, որ վերջին անգամ 7-8 տարի առաջ էին մաքրվել: Հիմա էլ՝ ԶՕԸ-ի պատասխանատուների հետ ձգտում է շատ թե քիչ հաղթահարել առկա դժվարությունները, փորձում է վերադաս մարմինների հետ լուծել դրանց մի մասը:

Իսկ ԶՕԸ-ի աշխատակիցները՝ մի մասն Արաքսի ջուրը պոմպակայանին հասցնող ջրանցքն է մաքրում և խորացնում, մյուս մասը պոմպերն է վերանորոգում, երրորդ խումբը՝ ջրի կորուստները վերացնում...

Մեղրու ոռոգման համակարգում ստեղծված մտահոգիչ վիճակի և բնակչությանը հուզող հարցերի մասին ակնկալում ենք լսել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, ինչպես և Զրային պետական կոմիտեի ղեկավար Վահագն Գևորգյանի պարզաբանումը: Չէ՞ որ խոսքը մի ամբողջ տարածաշրջանի մասին է, որտեղ բնակչության զգալի հատվածի գոյության միակ միջոցն այգեգործությունն է...

#### Հ.Գ.

Շվանիձորում, վերադարձից առաջ, հյուրընկալվեցինք Հմայակ Վարդանյանի բնակարանում: Տանտիրուհին՝ տիկին Մարիամ Ոսկանյանը մեզ հյուրասիրեց Շվանիձորի մեղրածոր մրգերով և, իհարկե, տեղի անմրցելի գինով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/mekhru-araqsamerdz-gyukherum-orogman-jri-sakavutyanyan-patcharov-vtangvats-e-berqy-gyukhatsineri-aprusti-miak-mijotsy>

**28.08.2022 թ.**

### **Ուռուցքաբանության ազգային կենտրոնի մասնագետներն անվճար սոնոգրաֆիկ հետազոտություններ են իրականացրել Սյունիքում**

ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնը (ՈԻԱԿ), կարևորելով բժշկական ծառայությունների շարունակական զարգացումը, ՀՀ մարզերում նախաձեռնել է գիտագործնական միջոցառումների և գիտաժողովների շարք, որը կրում է «Ուռուցքաբանական ֆորում» անվանումը:

Ինչպես [«Արմենպրես»](#)-ին տեղեկացրին ՈԻԱԿ-ից, երկրորդ՝ «Երևան-Սյունիք ուռուցքաբանական ֆորումը», տեղի է ունեցել Կապանում: Ֆորումի բացմանը ողջույնի խոսքով է հանդես եկել ՈԻԱԿ տնօրեն Նարեկ Մանուկյանը, ով կարևորել է պարբերաբար այցերը մարզեր, դրանց ջրջանակում տեղի բժիշկների հետ համագործակցությունները,

բնակչության համար անվճար հետազոտությունները՝ կենտրոնի բժիշկների մասնակցությամբ:

«Ֆորումի ընթացքում, որին մասնակցում էին շուրջ 20 մասնագետ (ՈւԱԿ-ի բաժանմունքների ղեկավարներ, բժիշկներ), հանդես եկան զեկույցներով՝ մարզային գործընկերների հետ կիսվելով իրենց փորձով, տարբեր գիտաժողովների, մասնագիտական որակավորումները բարձրացնող վերապատրաստումների ընթացքում ձեռք բերած գիտելիքներով, ինչպես նաև ներկայացրեցին ՈւԱԿ-ում վերջին շրջանում տեղի ունեցած փոփոխությունները, ձեռք բերված սարք-սարքավորումների հնարավորությունները, կատարված բացառիկ վիրահատությունները:

Ֆորումին զուգահեռ Սյունիքի մարզում բնակվող քաղաքացիների համար ԱՆՎՃԱԲ ստնոգրաֆիկ հետազոտություններ և նեղ-մասնագիտական խորհրդատվություններ են իրականացրել ՈւԱԿ-ի պրոֆեսիոնալ բժշկական անձնակազմի ներկայացուցիչները:

Ակցիայի շրջանակում ստնոգրաֆիկ հետազոտություն (կրծքագեղձ, վահանձև գեղձ, որովայն) անցավ և նեղ-մասնագիտական խորհրդատվություններ ստացավ մարզի ավելի քան 200 բնակիչ», - ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ Ուռուցքաբանության ազգային կենտրոնի մարզային այցերը կրելու են շարունակական բնույթ: «Մեզ համար կարևոր է, որ մեր երկրի բնակչությունը ստանա որակյալ մասնագիտական խորհրդատվություն, հետազայում՝ բուժում՝ անկախ բնակության վայրից», - հայտնում են կենտրոնից:

Աղբյուրը՝ <https://www.armenpress.am/arm/news/1091208.html>

**28.08.2022 թ.**

### **Տարեի վանքի վիմագիր գաղտնիքները**

Չորրորդ օրն է՝ Սյունիքի մարզում իր հերթական վիմագրագիտական հետազոտությունն է իրականացնում պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Արսեն Հարությունյանը:

Պատեհ առիթն օգտագործելով եւ թեմայի նկատմամբ մեր հետաքրքրությունը նկատառելով՝ այսօր զրուցեցինք ուսումնասիրողի հետ, ով Հարժիսի հուշարձանների հետազոտություններն ավարտելուց հետո տեղափոխվել էր Շինուհայր՝ նույն առաքելությամբ, որտեղ էլ հանդիպեցինք:

Այցեքարտ

Արսեն Հարությունյան. ծնված 1985-ին՝ Երեւանում, արմատներով՝ Մեղրու տարածաշրջանի Վահրավար գյուղից:

2007 թ. ավարտել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետը, մինչ այդ՝ 2003-05 թթ. ծառայել է Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում:

2009 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում, 2012-ից համատեղությամբ աշխատում է նաեւ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ ավագ գիտաշխատող:

2019-ից ԵՊՀ պատմության ֆակուլտետում դասավանդում է վիմագրություն առարկա:

Ինը գրքի եւ ութսունից ավելի հոդվածի հեղինակ է, մասնակցել է միջազգային գիտաժողովների՝ Վրաստանում, Տաջիկստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Թեկնածուականը պաշտպանել է 2013 թ., թեման՝ «Վաղարշապատի վանքերը. պատմավիմագրագիտական ուսումնասիրություններ»:

2014-15 թթ. մասնակցել է Տաթևի վանքի հնագիտական պեղումներին, որից հետո սկսել է զբաղվել Տաթևի վանքի եւ հարակից բնակավայրերի հուշարձանների վիմագրերի ուսումնասիրությամբ:

2015-ից՝ ամեն տարի, գործուղվել է Սյունիքի մարզի Տաթև, Տանձատափ, Սվարանց, Հալիձոր, Շինուհայր, Խոտ, Հարժիս բնակավայրեր, ընդօրինակել է ավելի քան 300 նորահայտ արձանագրություն, որոնց հիմամբ պատրաստվում է պաշտպանել դոկտորական ատենախոսություն՝ «Միջնադարյան Տաթևը եւ նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» թեմայով:

Հավաքած նյութի շրջանակներում հրատարակել է շուրջ 20 հոդված, այդ թվում՝ միջազգային գիտական պարբերականներում:

Առաջիկա հոկտեմբերին Բելգիայի Լուվեն քաղաքի կաթոլիկ համալսարանում դասախոսություն կներկայացնի «Տաթևի վանքի պատմությունն ըստ վիմագրերի» թեմայով:

\*\*\*

-Պարոն Հարությունյան, նախ՝ ողջունում ենք Ձեր հերթական այցը Սյունիք, նաեւ շնորհակալություն հայտնում՝ մեր երկրամասի մշակութային ժառանգության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար:

2014-15 թթ., ինչպես տեղեկացանք, մասնակցել էք Տաթևի վանքում իրականացված պեղումներին:

Կուզենայինք իմանալ՝ ստույգ ո՞ր տարածքներում էք պեղումներ կատարել, ո՞ւմ կողմից էին իրականացվում պեղումները եւ, իհարկե, ի՞նչ արդյունքներ ունեցաք:

-Պեղումներն իրականացնում էր ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը՝ ղեկավարությամբ պատմական գիտությունների թեկնածու Հուսիկ Մելքոնյանի:

Պեղումներն իրականացվել են հյուսիսային պարսպապատի զույգ աշտարակի եւ նախկին մուտքի տարածքում, հաջորդիվ նաեւ պեղվել են արեւելյան պարսպաշարը, ինչպես եւ հին գավթի ու հարավային (երբեմնի) նախասրահի տարածքները:

Արդյունքում՝ հողալիցքից բացվել են կառույցների հիմնապատերը, փաստագրվել են ուղղանկյունաձեւ տապանաքարեր, մեկը՝ արձանագիր (բեկորային), խեցեղեն նյութ, այդ թվում՝ արաբերեն արձանագրությամբ փիալա, որը թվագրվում է 14-15-րդ դարերին:

Պեղումների արդյունքները հրատարակվել են «Արամագր» գիտական պարբերականի 2017-ի թիվ 1-2 համարում՝ անգլերեն լեզվով:

-Ըստ Ձեր ունեցած տեղեկությունների՝ Տաթևի վանական համալիրը երբևէն չի ցածրացել ուսումնասիրողների ուշադրությանը:

- 20-րդ դարասկզբին Սուրբ Էջմիածնի միաբան, մեծ սյունեցի Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանն այցելել է Տաթև եւ որոշ ժամանակ զբաղվել տեղի հուշարձանների ու հարակից բնակավայրերի ուսումնասիրությամբ:



Արդյունքները հրատարակել են նախ «Արարատ» ամսագրում 1918-ին, իսկ առավել ամբողջական կից Դադիվանքի եւ Հաղարծինի վիմագրերի՝ 1938 թվականին՝ Երուսաղեմում, ուր ընդգրկված է Տաթևից շուրջ 150 արձանագրություն:

Այդ գիրքը, ցավոք, չի օգտագործվել «Դիվան հայ վիմագրության» 2-րդ պրակի պատրաստման ժամանակ:

Այնուհետև՝ Տաթևի վանքի վանահայր Արտակ եպիսկոպոս Սմբատյանը «Տաթև» տարեգրքում (1930 թ.) հրատարակել է «Տաթևի համառոտ պատմություն» խորագրով ծավալուն հոդվածը (Հալեպում): Դրանում հրատարակվել է Տաթևին առնչվող հինգ տասնյակից ավելի արձանագրություն:

1931 թ. ապրիլի 28-ի երկրաշարժից Տաթևի վանքը մեծապես վնասվել է, իսկ 1960-ականների վերջերից սկսվել է վանքի վերականգնումը:

Այդ ժամանակաշրջանում հնագետ Արամ Քալանթարյանը վանքի ավերակներից դուրս է բերել Ստեփանոս Օրբելյանի անվանակիր զույգ զանգը, որոնք մինչ այդ կորած էին համարվում, որոնցից մեկը ներկայումս ցուցադրվում է վանքի նորաբաց թանգարանի նախասրահում, իսկ մյուսը գտնվում է այժմյան զանգակատան ներսում:

Այնուհետև՝ Տաթևի վանքի վիմագրերի ուսումնասիրությամբ զբաղվել է վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, ով 2001-ին հրատարակել է Տաթևի վանքի վիմագրերից շուրջ 30-ը՝ միաժամանակ փաստելով, որ համալիրի որմերին են գտնվում բազմաթիվ վիմագրեր, որոնք դեռ սպասում են հետազոտողներին:

Դրանից հետո, ինչպես արդեն նշվեց, 2014-15 թթ. մեր արշավախմբի կողմից իրականացվել են հնագիտական պեղումներ, որոնց հաջորդել են իմ հեղինակած հոդվածները (2016-21 թթ.):

-Մեզ հետաքրքրում է Տաթևի գլխավոր՝ Սբ Պողոս-Պետրոս տաճարի կառուցումը նախաձեռնած եւ իրականացրած Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի տապանաքարի գտնվելու վայրը, քանի որ այդ խնդրի շուրջ մինչեւ հիմա տարբեր վարկածներ են շրջանառվում: Ձեր կարծիքը:

- Հովհաննես եպիսկոպոսը, ամենայն հավանականությամբ, թաղվել է տաճարին արեւմուտքից կից երբեմնի գավթում, որտեղ թաղված են եղել Սյունիքի թագավորության առաջին երկու գահակալը, բարձրաստիճան իշխաններ, հոգեւորականներ:

Ցավոք, 1890 թվականին Տաթևի վանքի վանահայր Անանիա Համագասպյանը հաջողել է քանդել երբեմնի գավթին ու զանգակատունը՝ տեղում կառուցելով էջմիածնատիպ եռահարկ զանգակատունը, որի բարձրությունը գերազանցել է գլխավոր տաճարի գմբեթի բարձրությանը, մի բան, որն անթույլատրելի է:

Ի դեպ, ըստ Արտակ եպիսկոպոս Սմբատյանի՝ Տաթևի վանքի հին զանգակատունը կառուցվել է Սուրբ Հովհան Ռոտունեցու նախաձեռնությամբ, սակայն, մեր կարծիքով, Տաթևում զանգակատուն եղել է շատ ավելի վաղ, ինչի մասին է վկայում Ստեփանոս Օրբելյանի անվանակիր զանգերի թվագրությունը, այն է՝ 1302, 1304 թվականներ, մի բան, որ թույլ է տալիս ենթադրել՝ զանգակատունը Հովհան Ռոտունեցու օրոք կարող էր նորոգված կամ առնվազն շինարարությունն ավարտին հասցված լինել:

Նոր զանգակատունը քանդվել է 1931-ի երկրաշարժից եւ ներկայումս կանգուն է միայն առաջին հարկաբաժինը:

Կարելի է ենթադրել, ինչպես ասացի, որ քանդված գավթում է եղել նաև Սյունյաց թեմի երեւելի առաջնորդ Հովհաննէսի տապանաքարը:

-Դուք նշեցիք Տաթեւի վանքի վանահայր Անանիա վարդապետ Համագասայանի նախաձեռնության մասին:

Մինչդեռ, շրջանառվում է կարծիք, թե հին գավիթը քանդվել է տեղը զանգակատուն է կառուցվել Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ:

- Այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսը Խրիմյան Հայրիկն էր, ով էլ արտոնել է գավթի քանդման եւ նոր զանգակատան կառուցման գործընթացը:

-Վանքի վերականգնման ողջ ընթացքում հայտնաբերվել են արձանագիր քարեր, խաչքարեր, տապանաքարեր:

Որտե՞ղ են դրանք ցուցադրվում, եւ արդյո՞ք հասանելի են ուխտավորներին:

-Դեռեւս Սուրեն Սաղումյանն է իր վերոնշյալ հոդվածում գրում, որ վանքի վերակառուցման ժամանակ (1980-ականներ) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու որմերի լիցքից դուրս են բերվել ամբողջական վիճակում գտնվող մի քանի խաչքար, որոնց վրա այսօր էլ տեսանելի են կրաշաղախի կարծրացած հետքերը, ինչը նշանակում է՝ ավելի վաղ դրանք օգտագործվել են իբրեւ շինաքար՝ չկարելուրելով կոթողի իրական նշանակությունը:

Լիցքից դուրս բերված խաչքարերից որոշներն այսօր ցուցադրվում են Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, տեղի երկրագիտական թանգարանում, ինչպես նաև Տաթեւի վանքում վերջերս բացված թանգարանում:

Զնայած այդ ամենին, մի շարք կոթողներ ցուցադրվում են վանքի բակում՝ հենած տարբեր շինությունների որմերին, մի քանիսն էլ կանգնեցված են պատվանդանների վրա: Այդ շարքում խիստ կարելուրում եմ Գրիգոր Տաթեւացու հիշատակին ձոնված խաչքարը, որը 1410 թ. կանգնեցրել է նրա քրոջորդի եւ հայտնի մատենագիր, փիլիսոփա, երաժիշտ, Տաթեւի համալսարանի երեւելի ներկայացուցիչ Առաքել Սյունեցին: Նախկինում այդ խաչքարն ագուցված է եղել հարավային կամարակապ սրահի որմին, իսկ այժմ կանգնեցված է ՄԲ Պողոս-Պետրոս տաճարի արեւմտյան պատին կից:

-Հետաքրքիր է, Տաթեւի վանքի խաչքարային արվեստն արդյո՞ք երբեւէ ամբողջական ուսումնասիրվել է եւ արդյո՞ք դրանք ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները:

-Տաթեւի կոթողային-խաչքարային արվեստը խիստ յուրահատուկ է հատկապես վաղխաչքարային՝ 9-10-րդ դարերի շրջափուլի համապատկերում: Մեր հետազոտությունները պարզում են, որ արդեն 10-րդ դարասկզբին Տաթեւի դպրոցին բնորոշ խաչքարային հորինվածքը ներկայանում է խիստ բուսականացված, հիմնախաչը՝ շրջափակված խաղողի որթագալարով, եռագունդ խաչաթևերով, որոնք էլ այս դպրոցին բնորոշ հիմնական առանձնահատկությունն են:

Մեզ հաջողվել է վավերացնել ստույգ թվակիր՝ 906, 910 թվականների խաչքարեր, որոնց հորինվածքային առանձնահատկությունները լիովին հաստատում են վերն ասվածը:

Իսկ խաղողը՝ քրիստոնեական խորհրդաբանության մեջ ցուցանում է Հիսուս Քրիստոսին, նրա արյունն ու փրկագործական նշանակությունը:

-Ձեր հետազոտությունների ընթացքում ընդօրինակված-վերձանած նորահայտ վիճագրերից ո՞րը կցանկանայիք առանձնացնել:

-Ես կառանձնացնեի համաքրիստոնեական Սուրբ Պանդալեոնի անվանակիր կոթողը, որն այսօր ցուցադրվում է Տաթևի վանքի նորաբաց թանգարանում եւ իր նշանակությամբ մեծապես հաստատում է Տաթևում այս սրբի պաշտամունքի գոյությունը:

Կոթողը, ըստ արձանագրության հնագրական առանձնահատկությունների՝ թվագրվում է 9-10-րդ դարերով:

Ո՞վ է Սուրբ Պանդալեոնը. ծագումով Նիկումեդիայից, մասնագիտությամբ բժիշկ:

Պանդալեոնի պաշտամունքը մեզանում առավելապես տարածված է եղել Արցախում, իսկ նորահայտ արձանագրության գյուտը փաստում է, որ այն կենցաղավարել է նաև Սյունիքում, ի մասնավորի՝ Տաթևի վանքում:

Այս արձանագրությունը հրապարակել էնք Բեյրութում լույս տեսնող Հայկազյան հայագիտական հանդեսում:

Պանդալեոնը հիշատակվում է դեռևս վաղմիջնադարյան աղբյուրներում, իսկ որ հետաքրքիրն է՝ հայ մանրանկարչության մեջ նա մշտապես պատկերվում է դեղատուփը եւ գդալը ձեռքին, ինչը խորհրդանշում է նրա բժիշկ լինելն ու հիվանդներին բուժելու պատրաստակամությունը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/tate%D6%82i-vanqi-vimagir-gakhtniqneri>

## 27.08.2022 թ.

### «ԱԱԲ» պրոյեկտ ընկերության ճանապարհաշինական նոր հասցեն Սյունիքում՝ Շամբ-Լծեն

Օգոստոսի 26-ին Շամբ-Լծեն ճանապարհի շինարարական հրապարակներ կատարած մեր այցի վերջին կանգառն ասֆալտբետոն արտադրող նորահիմն գործարանն էր, որ գտնվում է Մ-2 մայրուղի-Նորավանի խաչմերուկ տարածքի մերձակայքում:

Դա այն վայրն է, որտեղից սկիզբ է առնելու Մ-2-Նորավան-Շամբ-Լծեն-Տաթև-Կապան նոր ճանապարհը:

Գործարանում հանդիպեցինք աշխատակիցների եւ, իհարկե, տեղամասի պատասխանատու Էդգար Իսրայելյանի հետ, ով, իսկապես, մի լուսավոր անձնավորություն է, իր գործի նվիրյալ եւ հմուտ կազմակերպիչ:

Նրա խոսքով՝ գործարանն ասֆալտբետոնի արտադրության ոլորտում գիտության ու տեխնիկայի վերջին ճիչն է եւ ունի ժամում 240 տ արտադրողականության հզորություն:

Գործարանն արդեն իսկ պատրաստ է ասֆալտի արտադրության եւ մատակարարման...

\*\*\*

Ըստ երեւոյթին ժամանակն է, որ սյունեցիներս շատ թե քիչ ամբողջական պատկերացում ունենանք «ԱԱԲ» պրոյեկտ ճանապարհաշինական ընկերության թիմի եւ նրա գործերի մասին:

Ներկայումս ՄՊ ընկերությունը չորս խոշոր ծրագիր է իրականացնում Սյունիքի մարզում: Դրանք են՝ Տաթև-Լծեն ճանապարհի կեսը՝ հարավարեւելքից, Լաչինի միջանցքի նոր երթուղու Կորնիձոր-Տեղ հատվածը (այնտեղ եւս երկու կազմակերպություն է աշխատում), Մ-12-Գորիս-Արցախ միջպետական մայրուղու Գորիս-Տեղ հատվածը, իսկ չորրորդը Շամբ-Լծեն ճանապարհի կառուցումն է, որն ապագայում մաս է կազմելու դեպի

մարզկենտրոն, Մեղրի, Իրանի Իսլամական Հանրապետություն ձգվող տրանսպորտային մայրուղու:

2006 թվականին հիմնադրված ընկերությունն արդեն իսկ ճանաչում է բարի համբավ ունի հանրապետությունում, տարիների ընթացքում հասցրել է կյանքի կոչել մոտ 50 մեծածավալ նախագիծ: Այդ նախագծերից է Սատանի կամուրջ-Տաթև ճանապարհը, որը, չնայած ռելիեֆային բարդություններին, մեծաթիվ ոլորաններին եւ ծանրաբեռնվածությանը, շարունակում է մնալ ոչ միայն Սյունիքի, այլև հանրապետության լավագույն ու դիմացկուն ճանապարհներից մեկը:

Ուշագրավ է, որ մեր երկրամասում համեմատաբար նոր-նոր ոտք դրած ընկերությունը նաև սոցիալական ծրագրեր իրականացնելու մտադրություններ ունի. առաջին հասցեն, որքանով տեղեկացանք, Սիսիանի տարածաշրջանի Իշխանասար գյուղն է:

Տաթև-Լծեն, Կորնիձոր-Տեղ եւ Գորիս-Տեղ ճանապարհների կառուցման կամ հիմնանորոգման գործում «ԱԱԲ» պրոյեկտի դերակատարությանը դեռ կանդրադառնանք, իսկ այժմ՝ Շամբ-Լծեն ճանապարհի շինարարության մասին:

\*\*\*

Այդ ավտոճանապարհի կառուցումը մեկնարկել է մեկուկես ամիս առաջ՝ հուլիսի կեսերին:

Մոտ 6,6 կմ երկարությամբ ճանապարհը Շամբի խաչմերուկից կհասնի Լծեն գյուղ:

Տեղանքին քաջածանոթները գիտեն, թե ինչ կտրուկ ոլորաններով ենք Շամբի լճի մերձակայքից հասնում Լծեն:

Հիմա այդ ոլորանների երեք-չորս հատվածում իսկական շինարարական եռուզեռ է, մեծաքանակ եւ արդիական ճանապարհաշինական տեխնիկայի հոնդյուն...

Շինարարության տեղամասի ղեկավար Գրիգոր Սահակյանի հավաստմամբ՝ ամեն ինչ արվում է, որ մինչեւ դեկտեմբեր ավարտվեն ե՛ւ հողային աշխատանքները, ե՛ւ ասֆալտբետոնի առաջին ու երկրորդ շերտի տեղադրումը, ե՛ւ այդ հատվածի միակ կամրջի վերաշինումը:

Նախագծի համաձայն՝ ոչ միայն բարձունքը հաղթահարող ոլորանները կկրճատվեն, այլև էականորեն կընդլայնվի եւ բարեհարմար կդարձվի նոր ճանապարհը՝ բանուկ մասը՝ 6,6 մետր, կողնակները՝ 1,5 +1,5 մետր:

Ենթադրվում է նաև արհեստական բազմաթիվ ենթակառուցվածքների պատրաստում՝ մոտ 240 մ երկարությամբ հենապատ (տարբեր տեղերում), ջրահեռացման ստորգետնյա խողովակներ, եզրառուններ եւ այլն:

Ներկայումս, հողային աշխատանքներին զուգահեռ, իրականացվում է ավազակոպիճի պատրաստում եւ կուտակում:

Ինչպես նշեցինք՝ մեծաքանակ տեխնիկա է ներգրավված ճանապարհի շինարարությունում, սակայն ենթադրվող 300 հազար խորանարդ մետր հանույթն իրականացնելու համար, Գրիգոր Սահակյանի տեղեկացմամբ, առաջիկայում տեխնիկայի նոր խմբաքանակ կներգրավվի:

Շինարարական այդ եռուզեռում, այդուհանդերձ, կենտրոնական դեմքը մարդն է՝ մասնագետներ, մեքենավարներ, բանվորներ...

Շամբ-Լծեն հատվածում հիմա հինգ տասնյակ մարդ է աշխատում, այդ թվում՝ մերձակա գյուղերի բնակիչներ:

Աշխատողների թիվն առաջիկայում կավելանա, սակայն... Շինարարությունում զգացվում է աշխատուժի կարիք: Գրիգոր Սահակյանի ասելով՝ իրենք կարող են եւս 30 աշխատող ընդունել՝ մեխանիզատորներ, բետոնագործներ, բանվորներ...

Պարզվում է՝ աշխատուժի կարիք կա նաեւ Տաթեւ-Լծեն կառուցվող մայրուղու իրենց հատվածում, ինչպես եւ ասֆալտբետոնի արտադրության գործարանում: Այդ մասին տեղեկացնում է Էդգար Իսրայելյանը: Ըստ նրա՝ հաշվի առնելով նորագույն տեխնիկայի առկայությունը գործարանում, նոր կադրերը (աշխատանքի անցնելուց առաջ) պետք է վերապատրաստման փուլ անցնեն:

Իսկ ինչպե՞ս են լծենցիները վերաբերվում կառուցվող ճանապարհին:

Գյուղի վարչական ղեկավար Դերենիկ Հովհաննիսյանը պատմում է, որ լեռնային իրենց գյուղն աշխարհին կապող նոր մայրուղին բնակավայրի հոգեվարքը կասեցնելու հույսեր է ներշնչում: Ճիշտ է, գյուղամերձում մի քանի տասնյակ պտղատու ծառեր են հատվելու, բայց ուրիշ ելք չկա:

Գյուղացիները պետությունից ակնկալում են փոխհատուցում՝ կտրվող ծառերի դիմաց, որպեսզի նոր մրգատուներ տնկելու հնարավորություն ունենան:

Դերենիկ Հովհաննիսյանը հավատացնում է նաեւ, որ բարձունքի վերջին ոլորանում՝ հնարավոր պայթեցումների դեպքում, նախապես կամրացվի գագաթին գտնվող հուշարձանը՝ Մեծ հայրենականում գոհված լծենցիների հիշատակը հավերժացնող:

Շամբ-Լծեն ճանապարհի շինարարական հրապարակներ կատարած այցի վերաբերյալ մեր պատումը տեղին համարեցինք ավարտել՝ Էդգար Իսրայելյանի խոսքին երիցս հղում անելով: Երիտասարդ ճանապարհաշինարարը հավաստում է՝ «ԱԱԲ» պրոյեկտ ընկերությունը, բացի իրականացվող չորս ծրագրից, Սյունիքում աշխատանքներ իրականացնելու այլ ծրագրեր եւս ունի, ասել է թե՛ ընկերությունը Սյունիք է եկել երկարաժամկետ կտրվածքով՝ այստեղ կառուցելու եւ արարելու մտադրությամբ: Իսկ կատարվող աշխատանքների որակի ցուցիչը կլինեն Շամբ-Լծեն, Տաթեւ-Լծեն, Կորնիձոր-Տեղ եւ Գորիս-Տեղ ճանապարհների շինարարության՝ իրենց թիմին վստահված հատվածների կառուցման արդյունքները:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/aab-proyekt-ynkeruty-an-ghanaparhashinakan-nor-hastsen-syuniqum-shamb-ltsen>

**25.08.2022 թ.**

### **Հանդիպում՝ ՀՀ-ում Չինաստանի դեսպանի հետ**

Այսօր՝ օգոստոսի 25-ին, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յոնգին:

Ողջունելով դեսպանին՝ համայնքի ղեկավարը կարևորել է Չինաստանի հետ բարեկամական հարաբերությունները՝ ընդգծելով այն հանգամանքը, որ 2016 թվականին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Կապան քաղաքի և չինական Նինբո քաղաքի միջև: Միաժամանակ իր երախտագիտությունը հայտնել Նինբո քաղաքին, Քովիդ-19 համավարակի ծանր պայմաններում, Կապանին մարդասիրական աջակցություն ցուցաբերելու համար:

Գևորգ Փարսյանը շնորհակալություն է հայտնել նաև դեսպանին այս ոչ հեշտ ժամանակաշրջանում Կապան այցելելու համար և խոսել հետպատերազմյան դժվարությունների, առկա մարտահրավերների և այլ առնչվող երևույթների վերաբերյալ: Այս համատեքստում դեսպանը ներկայացրել է իր երկրի դիրքորոշումը՝ հույս հայտնելով, որ երկու երկրները քաղաքական-դիվանագիտական երկխոսության միջոցով կհասնեն խաղաղության:

Անդրադառնալով այցի բուն նպատակին՝ կողմերը խոսել են արդյունավետ համագործակցության ընդլայնման հնարավորությունների վերաբերյալ, համաձայնել, որ ներուժը բավականին մեծ է, և կարող են հաջողությամբ համագործակցել մի շարք ոլորտներում: Երկկողմ կարևորվել է նաև համագործակցությունը փորձի փոխանակման, զբոսաշրջության, կրթության և տնտեսության զարգացման ուղղություններով:

Հանդիպման ավարտին տեղի է ունեցել խորհրդանշական նվերների փոխանակման արարողություն:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3cAoY8D>

**25.08.2022 թ.**

### **Աղավնոյից ու Բերձորից 20 ընտանիք հաստատվել է Սյունիքի մարզում**

Արցախի Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի, Աղավնո և Սուս գյուղերի բնակիչները մինչև օգոստոսի 25-ը ժամանակ ունենին իրենց բնակավայրերից դուրս գալու համար, քանի որ այդ բնակավայրերն անցնելու են Ադրբեյջանի վերահսկողության տակ՝ պայմանավորված Արցախը Հայաստանին կապող նոր միջանցքի գործարկմամբ:

Այս օրերին բնակիչները վերջին իրերն են դուրս բերել տներից, տարհանվում են մշակութային կոթողները: «Արմենպրես»-ի հետ զրույցում Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի խոսնակ Վիկտորյա Պետրոսյանը, անդրադառնալով Բերձորից և Աղավնոյից տարհանված բնակչության տեղավորման հարցին, նշեց, որ այդ բնակավայրերի բնակիչների մեծամասնությունը ցանկություն է հայտնել հաստատվել Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերում: «Արցախում հաստատվող ընտանիքների թիվը դեռ հստակ չէ: Օգոստոսի վերջին պատրաստ կլինեն տարհանված ընտանիքների բնակարանների ձեռքբերման համար նախատեսվող սերտիֆիկատները: Ըստ այդմ՝ նրանք կհաստատվեն այն բնակավայրերում, որտեղ իրենք ցանկություն կունենան», -մանրամասնեց ՏԿԵ նախարարի մամուլի խոսնակը:

Բերձորի, Աղավնոյի բնակիչներից շատերը իրենց ապաստանն են գտել Հայաստանի Սյունիքի մարզում, մյուսները տեղափոխվել են այն բնակավայրեր, որտեղ հարազատներ ունեն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի մամուլի խոսնակ Զատա Մանուչարյանն էլ մեզ հետ զրույցում տեղեկացրեց, որ կոնկրետ Աղավնոյի և Բերձորի հետ կապված սոցիալական առանձին ծրագրեր չկան, սակայն Արցախի առանձին շրջաններից տեղահանվածների համար բնակարանային ապահովության պետական աջակցության հիփոթեքային ծրագիր է գործում: «Եթե իրենք համապատասխանեն սահմանված

չափորոշիչներին, դիմեն ըստ ընթացակարգի, ինչպես մյուս շահառուները, կարող են ևս օգտվել ծրագրից», -ասաց նա:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1091008/>

**24.08.2022 թ.**

**Զանգեզուրի պղնձամոլիբդենային ջանքով Սիսիանում վերագործարկվեց քարի արդյունահանման և մշակման ընկերությունը**

Օգոստոսի 23-ին նշանակալից իրադարձության մասնակիցը եղանք Սիսիան քաղաքում գործունեության երեք տարվա դադարից հետո վերագործարկվեց քարի արդյունահանման և մշակման VH Stone ընկերությունը:

Մինչ տոնակատարության բուն ընթացքին անդրադառնալը՝ հետադարձ հայացք ձգենք ընկերության անցած ճանապարհին:

«Վի էջ սթոուն» ՍՊ ընկերությունը (դա ընկերության սկզբնական անվանումն էր) հիմնադրվել է 2000 թվականին՝ Գառնիկ Հովակիմյանի կողմից (Սիսիանի քաղաքապետն էր 1996-99 թվականներին):

Հետագայում մի քանի անգամ փոխվել են սեփականատերերը: 2015-ին դարձել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի դուստր ձեռնարկություն, սակայն 2019-ին դադարեցվել է ընկերության գործունեությունը:

Ձեռնարկությունն ի սկզբանե զբաղվել է բնական քարերի՝ գրանիտի, տրավերտինի, բազալտի, մարմարի, տուֆի (հրաբխային և ֆելզիտային) արդյունահանմամբ ու մշակմամբ:

Որպես հումք օգտագործվել է Շենաթաղի գրանիտը, Շաքիի բազալտը, իսկ Բոնակոթում հետագոտվել է ֆելզիտի հանքավայրը:

Սկզբից ի վեր հիմնական շեշտը դրվել է Սիսիանի բնաշխարհի քարատեսակների արդյունահանման և մշակման վրա, բայց քարի հումքի ներմուծման աշխարհագրությունն ընդգրկում էր՝ Արցախից մինչև Նոյեմբերյան:

2008 թվականին ընկերությունը վերակառուցվել-վերազինվել է պարսիկ մասնագետների աջակցությամբ, ովքեր էլ տեղադրել-կարգաբերել են քար մշակող ժամանակակից սարքավորումներ, որոնք հնարավորություն են ընձեռել ամսական մինչև 20 հազար քառակուսի մետր երեսապատման սալիկներ արտադրել:

Ընթացքում բարեկարգվել է ընկերության զբաղեցրած 2,7 հեկտար տարածքը:

Արտադրանքը հիմնականում սպառվում էր արտերկրում, այն լայն կիրառություն ուներ շինությունների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարդարման աշխատանքներում և արտահանվում էր հատկապես Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, ԱՄՆ:

Ընկերությունը մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, արտադրանքը ցուցադրվել է Մոսկվայում, Հունգարիայում, Իտալիայում:

Այդ ժամանակ VH Stone ընկերությունն արդեն իսկ լուրջ դերակատարություն ուներ Սիսիանի տարածաշրջանի սոցիալական ոլորտում:

\*\*\*

Հարուստ անցյալ..., բայց և անորոշ ու սառեցված վիճակ էր քարերի մշակման այդ ձեռնարկությունում մինչև վերջին ժամանակներս..

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նոր սեփականատերն ու նոր թիմը, դատելով ընկերության վերջին ամիսների գործունեությունից, սոցիալական

որոշակի պարտավորություն են ստանձնել ոչ միայն Քաջարան ու Կապան համայնքներում, այլև մարզի ամբողջ տարածքում, ինչը, անշուշտ, քաջալերանքի արժանի գործելակերպ է:

Այդ ռազմավարության շնորհիվ էր, որ դեռևս այս տարվա ապրիլին խնդիր դրվեց վերագործարկել VH Stone ընկերությունը: Եվ աստիճանաբար սկսեցին վերագործարկմանը միտված աշխատանքները, որոնք էլ հաջողությամբ պսակվեցին:

Ներկայումս արդեն ընկերությունում կա 40 աշխատատեղ՝ համալրված հիմնականում տեղացի փորձառու մասնագետներով, իսկ ամսական արտադրողականությունը հասել է 2500 քառակուսի մետր սալիկների արտադրության:

Օգոստոսի 23-ի տոնական օրը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ղեկավար անձնակազմն ավելի վաղ էր ժամանել Սիսիան՝ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոյի, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Զհանյան, գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյան, ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյան: Նրանք հետաքրքրվում էին ոչ միայն տոնակատարության նախապատրաստության ընթացքով, այլև հրնթացս քննարկում ընկերության գործունեությանն առնչվող հարցեր:

Ընկերության բակում կազմակերպվել էր ներկայումս մշակվող քարատեսակներից պատրաստվող արտադրատեսակների ցուցահանդես՝ երեսապատման սալիկներ, եզրաքարեր, քիվեր, ճաղավանդակներ, տարբեր տեսակի շինաքարեր, որոնք արդեն իսկ պահանջարկ ունեն ՌԴ-ում, Հարավային Կորեայում և ԵՄ երկներում:

VH Stone -ի վերագործարկման առիթով ընկերություն էին այցելել բազմաթիվ հյուրեր:

Հանդիսավոր արարողությունը սկսվեց ընկերության բակում կազմակերպված հանրահավաքով:

Նախ ելույթ ունեցավ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոյին, ով արտադրամասի բացումը գնահատեց իբրև ՓԲ ընկերության և ՀՀ կառավարության համագործակցության հերթական դրսևորում, որը կոչված է որոշակիորեն լուծելու Սիսիանի բնակչության զբաղվածության խնդիրը, ինչպես և արդյունավետորեն օգտագործելու տեղական հումքային ռեսուրսները: Նա հավաստիացրեց, որ ընկերությունն արդեն իսկ ունի 120 աշխատատեղի ու ամսական 5 հազար քառակուսի մետր սալիկների արտադրության ներուժ:

Այնուհետև ելույթներ ունեցան Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, VH Stone ընկերության տնօրեն Նիկոլայ Վիդենին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Գեղեցիկ կատարումներով հանդես եկան Սիսիանի «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի պարային համույթի սաները:

Հաջորդեց արտադրամասի մուտքի ժապավենը կտրելու արարողությունը, որը կատարեցին գլխավոր տնօրենը, Սյունիքի մարզպետը և Սիսիանի համայնքապետի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը:

Ներկաները շրջայց կատարեցին արտադրամասում: Այնտեղ ականատես եղանք արտադրության հրաշալի տեսարանների՝ ժամանակակից մեքենասարքավորումներ, քարի մշակման տարբեր փուլեր, արտադրական բարձր կուլտուրա և, իհարկե, անվտանգության կանոնների խստագույն պահպանում... Իսկ պատրաստվող արտադրանքի հումքն առայժմ



Շաբեի անդեզիտային բազալտի հանքավայրից է: Ի դեպ, իրականացվում են ծրագրեր տարածաշրջանում նոր քարահանքեր շահագործելու, ինչպես և հանրապետության տարբեր վայրերից այլ քարատեսակներ ներկրելու ուղղությամբ:

Վերջում, իհարկե հյուրասիրություն էր, որը նախևառաջ շփումների հնարավորություն ընձեռեց հյուրերին և ընկերության աշխատակիցներին:

Ընկերության վերագործարկման արարողությանը մասնակցում էին նաև Ազգային ժողովի պունեցի պատգամավորներ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ Կարեն Համբարձումյան, Դավիթ Դանիելյան, Մարինե Ղազարյան, Արմեն Խաչատրյան, Նարեկ Ղահրամանյան:

Տոնակատարությանը ներկա էին նաև ՀՀ նախկին փոխվարչապետ, ներկայումս ՔՊ կուսակցությունից Երևանի համայնքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը, «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը, ՀՀ ՋՈՒ քանակային կորպուսի հրամանատար Արտակ Բուդաղյանը, մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչներ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/zangezuri-pkhndzamolibdenayini-janqov-sisianum-veragortsarkvets-qari-ardyunahanman-ev-mshakman-ynkerutyuny>

**24.08.2022 թ.**

### **Կառավարության որոշմամբ ԶՄՊԿ-ի բաժնետոմսերի 6 տոկոսի կառավարումը հանձնվեց ԱՆԻՖ-ին**

ՀՀ Կառավարության որոշմամբ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 6,875 տոկոս բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվեցին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը:

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բադալյանը ներկայացնելով նախագիծը նշեց, որ ԱՆԻՖ-ը նույն ինքը «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն հանդիսանում է 100% պետական սեփականությամբ առևտրային կազմակերպություն, որի մանդատներից մեկը պետության ռազմավարական նշանակության ակտիվներում պետության՝ որպես սեփականատեր, արդյունավետ ներկայացուցչությունն է: ԱՆԻՖ-ի միջոցով Հայաստանի Հանրապետությունը առավել արդյունավետ կիրացնի իր բաժնեմասնակցությունն Ընկերությունում, ինչպես նաև ԱՆԻՖ-ի միջոցով կարող է ստեղծել պետության և Ընկերության բաժնետերերի միջև երկարաժամկետ համատեղ տեսլական և հնարավորություններ բիզնեսի զարգացման և Հայաստանի տնտեսական օգուտների համար:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ նշեց, որ 2021թ. սեպտեմբերի 30-ին Կառավարությունը ստացել է 15 տոկոս Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաժնետոմսերից որպես նվիրատվություն:

«Այն ժամանակ մենք կառավարումը հանձնեցինք ԱՆԻՖ-ին կամ Հայաստանի պետական հետաքրքրությունների հիմնադրամին: 2022 թվականի մարտի 24-ին՝ մենք որպես նվիրատվություն ստացել ենք ևս 6.8 տոկոս: Այն ժամանակ նվիրատվությունը որոշվել է գաղտնի, քանի որ նվիրատուն բիզնես գաղտնիությունը պահապանելու խնդիր է ունեցել: Երբ

իրենք կողմից այդ գաղտնիության անհրաժեշտությունը վերացել է, արդեն մենք այդ բաժնեմասը ևս հանձնում ենք Հայաստանի պետական հետաքրքրությունների հիմնադրամին կառավարման համար», - հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Աղբյուրը՝ <https://armtimes.com/hy/article/242683>

**19.08.2022 թ.**

**2021-2022 թվականներին ՋՊՄԿ ՓԲ ընկերության մասնակցությունը Քաջարանում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին կհասնի շուրջ 700 միլիոն դրամի**

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հրապարակում է Քաջարան համայնքում 2021 թ. իրականացված եւ 2022 թ. նախատեսվող սուբվենցիոն ծրագրերին ՋՊՄԿ ՓԲԸ մասնակցության մասին տվյալները:

Այսպես՝ հաշվետու ժամանակահատվածում Քաջարան համայնքում իրականացված եւ իրականացվող ծրագրերի համար ՋՊՄԿ մասնակցությունը կհասնի շուրջ 700 միլիոն ՀՀ դրամի:

Սուբվենցիոն ծրագրերն իրականացվել են Պետության, համայնքի եւ ՋՊՄԿ համատեղ ներդրմամբ: Բոլոր ծրագրերում ՋՊՄԿ ներդրումը կազմել է ընդհանուր ներդրման 10-30%-ը:

Համայնքապետարանից տրամադրված տվյալների համաձայն իրականացված ընթացիկ եւ իրականացվելիք ծրագրերն են՝

- Գեղավանք-Գեղի ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգում
- Մ2-Խաչինան ճանապարհի հիմնանորոգում
- Տերյան փողոցի և բակերի հիմնանորոգում
- Շիրվանզադե փողոցի բակային հատվածի հիմնանորոգում
- Բաբիկավան բնակավայրի բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգում
- Բակունց 3,4 և 7 բազմահարկ բնակելի շենքերի բակի հիմնանորոգում
- Չարենց և Շահումյան փողոցների բնակելի շենքերի բակերի հիմնանորոգում
- Գայի փողոցի, Խանջյան փողոցի, Գայ-Մ2 մայրուղի անցուղու հիմնանորոգում

Համայնքում 11 շենք ներառվել է շենքերի ջերմամեկուսացման ծրագրում, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1 մլրդ 91 միլիոն 90 հազար դրամ, որից 709,735 մլն հատկացրել է պետությունը,՝ 25 մլն հատկացրել է համայնքը, 265,9 մլն հատկացրել է ՄՄԿ-ի Զարգացման Օրագիրը, իսկ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը 91,18 մլն:

**2022 թվականին կատարվելիք աշխատանքներն են՝**

- Քաջարան համայնքի բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում/հիմնանորոգում (Գետիշեն, Չագիկավան, ք.Քաջարան):
- Քաջարան համայնքի բնակավայրերի փողոցային լուսավորության համակարգերի կառուցում (Աջիբաջ, Կաթնառատ, Նոր Աստղաբերդ, Փուխրուտ, Անդոկավան, Չագիկավան)
- Մեքենասարքավորումների ձեռք բերում (ջրցան, ավտոաշտարակ, մինի ամբարձիչ, տրակտոր)

Վերոնշյալ բոլոր ծրագրերի համար ՋՊՄԿ-ն հատկացրել է ընդհանուր մոտ 700 մլն դրամ:

Աղբյուրը՝ <https://ejc.am/hy/article/4123>

17.08.2022 թ.

Մ-2- Վարդավանք-Ագարակ նոր ճանապարհի կառուցումը՝ ավարտական հանգրվանում 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կետերից մեկով ազդարարվեց կողմերի մտադրությունը՝ ապաշրջափակելու տարածաշրջանի հաղորդակցության ուղիները:

Մինչդեռ Սյունիքի մարզի սահմանամերձում, որքան էլ տարօրինակ է, հակառակ գործընթացներ մեկնարկեցին:

Մեր իսկ տարածքում շրջափակվեցին մի քանի ճանապարհներ, որոնք հաղորդակցության ուղիներ էին մարզի բնակավայրերի միջև:

Շրջափակված ճանապարհներից մեկն էլ Կապան համայնքի Սյունիք բնակավայրից Ագարակի ենթաշրջան ձգվող ավտոճանապարհն էր, որը տարիներ առաջ էր մեր կողմից հիմնանորոգվել:

Եվ ուրեմն՝ 2020 թ. դեկտեմբերի 18-ի ամոթալի նահանջից հետո այլևս հնարավոր չէր Կապան մարզկենտրոնից տվյալ ճանապարհով գնալ Ագարակի ենթաշրջանի գյուղեր (Ագարակ, Եղվարդ, Ուժանիս):

Ենթաշրջանի հետ տրանսպորտային հաղորդակցությունը սկսեց իրականացվել Մ-2-ից դեպի Վարդավանք, ապա Խդրանց և Ագարակ ձգվող՝ մեծամասամբ գրունտային, խորդուբորդ, հորդառատ տեղումներից հետո դժվարանցանելի ճանապարհով:

Ուստի և 2021-ին կառավարության կողմից խնդիր դրվեց վերականգնել այդ ճանապարհը, և հայտարարվեց մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչվեց «Ապառաժ» ՍՊ ընկերությունը:

2021-ի հունիսին մեկնարկեց Մ-2-ից Ագարակ ձգվող ճանապարհի վերակառուցումը՝ մոտ մեկ մլրդ դրամ նախագծային արժեքով:

\*\*\*

«Ապառաժ» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Դավիթ Ավետիսյան) Սյունիքում ճանաչում ունեցող շինարարական, ճանապարհաշինական կազմակերպություն է:

Այդ ընկերությունն է, որ վերջին երկու տարում կառուցել է Մ-2 մայրուղու Արծվանիկ-Կարմրաքար 5,1 կմ երկարությամբ հաստվածը, նույն մայրուղու Շուռնուխ գյուղի 5 կմ երկարությամբ ճանապարհահատվածը:

Ընկերությունը (սուբվենցիոն ծրագրով) աշխատանքներ է կատարել նաև Կապան քաղաքի Թումանյան ու Բաղաբերդ փողոցներում:

Ներկայումս «Ապառաժ» ՍՊԸ-ն (դարձյալ սուբվենցիոն ծրագրով) ներհամայնքային ճանապարհ է հիմնանորոգում Քաջարանի Խաչինա գյուղում, իսկ մեկ այլ վայրում գորամասի շինարարություն է իրականացնում:

Ընկերությունը զինված է ճանապարհաշինական արդիական տեխնիկայով, իսկ Կապանում հիմնադրել է ասֆալտբետոն պատրաստող գործարան՝ ժամում 90 տ արտադրողականությամբ:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ «Ապառաժ»-ը շուտով կստանձնի նաև Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի կառուցումը, որի հողային աշխատանքներն իրականացնում է մեկ այլ կազմակերպություն:

\*\*\*

Մ-2- Վարդավանք-Ագարակ ճանապարհի շինարարության տարբեր փուլերում «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը քանիցս այցելել է շինարարության տեղամասեր:

Օգոստոսի 16-ին հերթական անգամ ծանոթացանք շինարարական աշխատանքների ընթացքին:

Մոտ մեկ տարի ընդգրկող ժամանակաշրջանում ընկերությունը (շինտեղամասի պետ՝ Տիգրան Սարգսյան) հսկայածավալ աշխատանք է կատարել:

Այսօր արդեն S-8-22, (Մ-2)՝ Վարդավանք-Խղրանց-Ագարակ 12,4 կմ երկարությամբ ավտոճանապարհն ամբողջապես ասֆալտապատված է:

Հողային աշխատանքներն ավարտվել էին դեռևս 2021-ի տարեվերջին:

Մինչև ասֆալտապատում՝ ամբողջ ճանապարհը քլնգվել է, այնուհետև ավազակոպճային ծածկով պրոֆիլավորվել, որից հետո ծածկվել C-5 խճային շերտով (12 սմ հաստությամբ), վերջում՝ ասֆալտապատվել՝ նախ 8 սմ խոշորահատիկ, ապա 4 սմ հաստությամբ մանրահատիկ շերտով:

Ճանապարհով երթևեկելիս հնարավոր չէ չտեսնել մայրուղուն կից նորակառույց հենապատերը՝ 1-ից մինչև 3,7 մ բարձրությամբ:

Հիշեցնենք, որ ճանապարհը նախկինում ունեցել է 3-ից 3,5 մ լայնություն, իսկ հիմա՝ երթևեկելի մասը՝ 6 մ, կողնակները՝ 1,5+1,5 մետր:

Բնակավայրերի ներսում կառուցվել են նաև ջրատար առուներ՝ բետոնե:

Եվ, այդ բոլորով հանդերձ, աշխատանքները դեռևս ակտիվ ընթացքի մեջ են...

Ներկայումս ճանապարհաշինարարներն աշխատում են կողնակների վրա. այն պետք է ունենա 24 սմ հաստություն՝ ջրում խտացված կոպիճով:

Աշխատում են նաև կողային առուների վրա:

Այդ ամենին կիսաջորդեն ճանապարհի կահավորումը, գծանշումը, ազդանշանային սյուների և արգելափակոցների տեղադրումն ու ներկումը:

Տիգրան Սարգսյանի հավաստմամբ՝ մինչև հոկտեմբեր կավարտվեն աշխատանքները և Ագարակի ենթաշրջանը կունենա բարեհարմար ու անվտանգ ճանապարհ:

Թեև աշխատանքները դեռ ամբողջովին ավարտված չեն, բայց արդեն իսկ կարելի է արձանագրել, որ միջմարզային այդ ճանապարհի որակը (առերևույթ) չի զիջում միջպետական մայրուղիների որակին:

Տիգրան Սարգսյանի հետ զրուցեցինք նաև այն հարցի շուրջ, թե, այդ բոլորով հանդերձ, ինչ դժվարություններ կան S-8-22, (Մ-2)՝ Վարդավանք-Խղրանց-Ագարակ ավտոճանապարհի կառուցման գործում:

- Հիմա, իհարկե, դժվար է աշխատուժի խնդրի լուծումը,- ասում է Տիգրան Սարգսյանը,- սակայն մեր ընկերությունը նման խնդիր չունի, քանզի մեխանիզատորների մի մասն էլ հանրապետության այլ բնակավայրերից ենք հրավիրել:

Որոշ խնդիրներ էլ ծագել են բնակավայրերի ներսում. դա այն դեպքում, երբ կառուցվող ճանապարհն ինչ-որ տեղ շփման եզրեր է ունեցել տնամերձերի հետ. այդ խնդիրները (կողմերի համաձայնությամբ) լուծում են ստացել:

Տեղյակ ենք նաև, որ հայտնի իրադարձությունների պատճառով էական փոփոխություններ են գրանցվել շինանյութերի շուկայում նույնպես, ինչը դժվարություններ է

հարուցում հատկապես այն կազմակերպություններում, որոնք մրցույթները շահել են նախորդ տարում՝ շինանյութերի այն ժամանակվա՝ գրեթե երկու անգամ ցածր գներով:

Այդքանով հանդերձ՝ շինտեղամասի պետը հավաստիացնում է, որ սահմանված ժամկետում ու բարձր որակով կավարտեն ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի կառուցումը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/m-2-vardevanq-agarak-nor-chanaparhi-karutsumy-avartakan-hangrvanum>

**13.08.2022 թ.**

**Լույսի ցուլեր Շուռնուխում. անդամահատված գյուղը դիմակայում է արհավիրքին**

Դեռևս 2021-ի հունվարի 5-ին Շուռնուխ գյուղի արևելյան հատվածը (Մ-2 մայրուղուց արևելք), առանց հիմնավորված եւ իրավական արժեք ունեցող պատճառների, պաշտոնապես փոխանցվեց Ադրբեջանին...

Մ-2 մայրուղու՝ գյուղամիջով անցնող հատվածը վերածվեց յուրօրինակ սահմանաբաժանի, որի հսկողությունը հանձնվեց ռուս սահմանապահներին:

Տասնմեկ տան բնակիչներ զրկվեցին տարիներով իրենց արած-դրածից:

Հիմա այդ թաղամասում ադրբեջանցի զինյալներն են վիստում...

Գյուղը մի նոր փորձության ենթարկվեց 2021-ի նոյեմբերի 16-ից հետո, երբ ադրբեջանցիները շրջափակեցին Գորիս-Կապան մայրուղին:

Շուռնուխն այդպիսով ոչ միայն կիսատվեց, ոչ միայն շրջափակվեց, այլև դարձավ մեր ծնկաչոք, նվաստացած վիճակի, մեր ինքնիշխանությունը տրորելու յուրօրինակ խորհրդանիշ...

\*\*\*

2021-ի հունվարի 5-ից հետո լրջագույն խնդիր դարձավ գյուղի հետագա գոյության (գոնե այդ տեսքով) պահպանումը:

Կառավարությունը ստանձնեց գյուղի արևելյան թաղամասից տեղահանված 11 ընտանիքին բնակարանով ապահովելու խնդրի լուծումը:

Եվ հայկական հատվածում 2021-ի ապրիլի 23-ին տրվեց բնակելի նոր թաղամասի կառուցման մեկնարկը:

Կառուցվող թաղամասը զբաղեցնում է մոտ 2,5 հա տարածք, կառուցվում է 14 անհատական բնակարան՝ օժանդակ հարմարություններով, մեկ բնակարանը՝ 170 քառակուսի մետր մակերեսով:

Բնակելիների շինարարությունն իրականացնում է «Անապատ-2» արտադրական կոոպերատիվը:

Նախնական տվյալներով 470 մլն դրամ արժողությամբ այդ ծրագրի իրականացումը, կարծեք, վերջնական հանգրվանում է, թեև խոստացել էին ավարտին հասցնել 2021-ի տարեվերջին:

Ինչեւէ, հուսանք, որ 2022-ի դեկտեմբերին (եթե ոչ շուտ) բնակարանամուտ կտոնենք Շուռնուխում:

\*\*\*

Շուռնուխի հարատեւումն ապահովելու առաջնահերթ պայմաններից մեկն էլ ճանապարհային բնականոն հաղորդակցության վերականգնումն է, որի ուղղությամբ աշխատանքներ են տարվում, ինչը խոսակցության առանձին թեմա է:

Այդ ամենի հետ մեկտեղ Գորիսի համայնքային իշխանությունն էլ իր քայլերն է ձեռնարկում գյուղի շատ թե քիչ բնականոն կյանքը կազմակերպելու համար:

Անցած գրեթե մեկուկես տարում համայնքապետարանը մի քանի ծրագիր է իրականացրել Շուռնուխում: Դրանցից մեկն էլ երբեմնի գյուղապետարանի շենքի (որ նաև բնակավայրի ակումբի ու գրադարանի շենքն էր) բնակելիի վերափոխելու ծրագիրն էր:

Դեռևս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ ուրբահարված, կիսաքանդված շենքի վերակառուցման ու բնակելի դարձնելու համար համայնքային իշխանությունը 38 մլն դրամի ներդրում էր կատարել:

2021-ի երրորդ եռամսյակում մեկնարկած այդ ծրագիրը կյանքի կոչեց «Բեսթհուուդ» ՄՊ ընկերությունը (ղեկավար՝ Հայկ Բաղդասայան):

Շենքը, ի վերջո, վերածվեց չորս բնակարանի՝ յուրաքանչյուրը երեք սենյակով, որոնցում ստեղծվել են ապրելու համարյա բոլոր պայմանները՝ ժամանակակից հարդարանքով:

Նույն շենքում կահավորվել է Երիտասարդական կենտրոնը (գույքը տրամադրել է «Վորլդ վիժն» կազմակերպությունը):

Կահավորվել է նաև Մանկական զարգացման կենտրոնը՝ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության ծրագրով:

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» կազմակերպությունն էլ վերակառուցված շենքի տանիքին արեւային պանելներ է տեղադրել եւ ջրատաքացուցիչներ:

Օգոստոսի 12-ը բնակարանամուտի սպասված պահն էր ...

Գյուղ էին ժամանել մի քանի տասնյակ մարդիկ Գորիսից, Կապանից, Ստեփանակերտից, հանրապետության այլ վայրերից:

Եվ բնակարանամուտը վերածվեց յուրօրինակ տոնախմբության...

Բնակարանները հատկացրին Թամարա Մարտիրոսյանի (Արցախից տեղահանված), Մարինե Միրզոյանի (Գորիսից Շուռնուխ տեղափոխված), Նիկոլայ Ղուկասյանի (Գորիսից Շուռնուխ տեղափոխված), Նվեր Ալեքսանյանի (Արցախից տեղահանված) ընտանիքներին:

Բայց մինչև բնակարանների բանալիների հանձնումը... Վերակառուցված բնակելիի բակում տեղի ունեցավ նախաժամ հավաք, որը վարում էր Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի գեղմասվար Ռուսլաննա Մանվելյանը:

Հավաքում՝ նախ օրհնության խոսք ասաց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

Ելույթ ունեցավ Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը:

Բնակելիի բանալիները տանտերերին հանձնեցին տեր Մակար վարդապետ Հակոբյանը, Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը, Սյունիքի մարզպետի օգնական Սուրեն Քեսեջյանը:

Ընդ որում՝ Ստեփանակերտի քաղաքապետն ամեն մի բնակարանի հեռուստացույց նվիրեց:

Իսկ Թամարա Մարտիրոսյանը երախտագիտության խոսք ուղղեց Գորիսի համայնքային իշխանությանը, համայնքապետ Առուշ Առուշանյանին՝ իրենց բնակարանային կարիքները լավագույնս հոգալու համար:

Այնուհետև տեր Մակար վարդապետ Հակոբյանը եւ Գորիսի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Ահարոն քահանա Մելքումյանը կատարեցին տնօրհների արարողություն:

Այդ ամենից հետո տոնակատարությունը շարունակվեց գյուղի արեւմտյան բարձունքում՝ հայոց եռագույնի ծփանքի ներքո...

Նախ մատուցվեց մատաղ, այնուհետև նորակառույց թաղամասի միջնամասում կատարվեց մանկական խաղահրապարակի բացում՝ կառուցված ՄԶԱԾ «Կայուն համայնքեր» ծրագրով: Իսկ հետո... Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի սաների եւ Գորիսի «Կանանց ռեսուրս» կենտրոնի ձեռքի աշխատանքների ցուցահանդես, վերիշենցի ժողովրդական վարպետ Ալբերտ Միրզոյանի քանդակների ցուցադրություն,

Գործիսի երկրագիտական թանգարանի ցուցահանդես՝ «Զանգեզուրյան հերոսամարտը» թեմայով, ազգային խաղեր եւ, իհարկե, գործիսյան բարիքների հյուրասիրություն՝ ըստ համայնքի գյուղերի տաղավարների:

Տոնակատարությանը համերգային ծավալուն ծրագրով հանդես եկավ Գործիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը, որը վարում էր մշակույթի կենտրոնի տնօրեն Հայկ Խաչատրյանը:

Համերգային ծրագրում ելույթներ ունեցան նաեւ անհատ կատարողներ Արթուր Դադայանը, Սոնա Մանվելյանը, Վաչե Մանվելյանը եւ Վանուհի Խաչատրյանը:

Համերգային ծրագրի շրջանակներում ներկաներին հաճելի պահեր պարգեւեցին նաեւ «Սյունիք» պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Վահե Մելքումյան) եւ Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի դեղին հարկերի «Զանգեզուր» համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Հարութ Առուստամյան):

Ինչպէս արդեն ասացինք՝ բազմաթիվ հյուրեր էին ժամանել Շուռնուխ. երեւի գյուղն այդքան մարդաշատ չէր եղել երբեւէ: Հյուրերի մեջ էր նաեւ Վայքի «Արշակունի» ռազմամարզական հասարակական կազմակերպության պատվիրակությունը՝ իրենց ղեկավար Արտավազդ Վարդանյանի գլխավորությամբ:

Հասկանալի հանգամանքների եւ տոնի աննախադեպ բազմամարդության պատճառով էր, որ տոնախմբության ամբողջ ընթացքում ոտքի վրա էր Գործիսի ոստիկանությունը՝ ոստիկանապետ Ալեն Կարապետյանի գլխավորությամբ:

Տոնը, որ կայացավ բարձր մակարդակով, ճաշակով եւ հարուստ բովանդակությամբ, կազմակերպել էր Գործիսի համայնքային իշխանությունը:

Տոնը վերստին հավաստեց, որ Շուռնուխն արժանապատվորեն է դիմակայում պարտադրված արհավիրքին, որ գյուղն ի վերջո հաղթահարելու է փորձությունները եւ լինելու է հավերժության ճամփա բռնած հայոց Սյունիքի հպարտ մասնիկն ու սահմանապահ գյուղը...

Հ.Գ.

Հյուրերը Շուռնուխ էին ժամանել տարբեր ճանապարհներով, մի մասը՝ Խոտ-Որոտան-Թասի լեռնանցք (Մ-2) մայրուղով, մյուս մասը՝ Տաթեւ-Կապան նորաշեն ճանապարհից դեպի Բարձրավան ձգվող եւ ապա Մ-2-ին միացող ճանապարհով, երրորդ խումբը՝ Տանձավեր-Շուռնուխ կառուցվող ու դեռեւս դժվարանցանելի ճանապարհով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/luysi-tsolqer-shurnukhum-andamahatvats-gyukhy-dimakayum-e-arhaviorqin>

**13.08.2022 թ.**

### **Գործիս. հիմնանորոգված Արտաշեսյաններ փողոցը քաղաքի գեղեցիկ անկյուններից մեկը դարձավ**

Գալիք՝ 2023 թ. տարեվերջին (ամենայն հավանականությամբ) Գործիս քաղաքում ակնհայտ կլինենք վերականգնված պատմական կենտրոնին (մոտ 20 հազար քառակուսի մետր մակերեսով), որը նոր շուք կհաղորդի հնամենի մեր բնօրրանին: Մինչ այդ, սակայն, ստիպված կլինենք համակերպվել քաղաքի կենտրոնի որոշ փողոցների ոչ բարեկարգ վիճակին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվելիք այդ ծրագրին նախորդել է (նույն հիմնադրամի կողմից) կենտրոնի ջրամատակարարման եւ կոյուղու համակարգի ներքին ցանցի հիմնանորոգումը, որը գրեթե ավարտին է հասցված: Եվ հիմա, երբ փողոցները պետք է բերվեն նախկին տեսքին, նույն այդ հատվածում (ինչպէս նշեցինք) քաղաքաշինական մեկ այլ՝ պատմական կենտրոնի վերականգնման ու կառուցապատման ծրագիրն է մեկնարկում...

Այդ ամենը, մինչդեռ, չի խանգարում, որ Գորիսի առանձին փողոցներ ու թաղամասեր հիմնանորոգվեն, բարեկարգվեն...

Նման մի ծրագրի ավարտը նշանավորվեց օգոստոսի 12-ին՝ Արտաշեսյաններ վերաշինված փողոցի բացմանը նվիրված տոնակատարությամբ:

Մոտ մեկ կիլոմետր երկարությամբ փողոցը տասնամյակներ շարունակ չէր վերանորոգվել եւ համարվում էր Գորիսի ներքաղաքային ամենաանբարեկարգ ճանապարհներից մեկը:

Գորիսի համայնքապետարանի եւ ՀՀ կառավարության ջանքերով 2021-ի 3-րդ եռամսյակում սկսվեց փողոցի կառուցապատումը, որի նախագծային արժեքը մոտ 130 մլն դրամ է:

«Արհովշին» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Մ. Գրիգորյան) հաջողեց անցած ամիսներին կյանքի կոչել ծրագրված աշխատանքները:

Մասնավորապես՝ ասֆալտապատվեց փողոցը, վերականգնվեցին մայրերը, կառուցվեցին ջրահեռացման առուները, վերաշինվեցին կամ նորովի կառուցվեցին անհատական բնակելի տներին հարակից հենապատերը, լուծվեց փողոցի արտաքին լուսավորման հարցը:

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» կազմակերպության ծրագրով էլ փողոցի միջնամասում կառուցվեց մանկական խաղահրապարակ:

Ժամը 14-ին Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի դեղատանիների «Զանգեզուր» համույթը (գեղարվեստական ղեկավար Հարութ Առուստամյան) փողոցի սկզբնամասում ազդարարեց տոնակատարության սկիզբը, որին հաջորդեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի մեթոդիստ Նարինե Մինասյանի խոսքը. նա ներկայացրեց օրվա խորհուրդը, ինչպես եւ իրականացված ծրագրի եւ քաղաքաշինական, եւ բարոյահոգեբանական նշանակությունը:

Հաջորդեց Արտաշեսյաններ փողոցի մուտքը երիզող ժապավենը կտրելու պահը, որի պատիվը վերապահեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, տեր Մակար վարդապետ Հակոբյանին, Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանին, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանին, ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանին, շվեցարահայ բարերար Թերեզա Մխիթարյանին, Գորիսի նախկին քաղաքապետ Սամվել Հարությունյանին, «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին, քանդակագործ Միհրան Միրումյանին, «Օգմենթար» ընկերության հիմնադիր Արթուր Խոջաբաղյանին, Քաջարանի համայնքապետ Սամվել Փարամազյանին, ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի ղեկավար Արման Վալեսյանին:

Հանդիսավոր արարողության մասնակիցներն այնուհետեւ քայլերթ կատարեցին հիմնանորոգված փողոցով, որի միջակայքում՝ նորաբաց խաղահրապարակի մոտ, հավաքվել էին թաղամասի բնակիչները՝ սուփրա-սեղանով, երաժշտությամբ:

Օրվա խորհրդին պատշաճող օրհնության խոսք ասաց տեր Մակար վարդապետ Հակոբյանը, ելույթներ ունեցան Սամվել Ալեքսանյանն ու Սամվել Հարությունյանը:

Տոնական օրը համեմվեց «Մեծ Հայք» մանկական պարային համույթի կատարումներով (գեղարվեստական ղեկավար՝ Համլետ Իսախանյան), ինչպես եւ Գորիսի մանկապատանեկան դպրոցի սաների հեծանվավազքով՝ ի նշան փողոցի հարմարավետության (դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝ Ալիկ Հովսեփյան):

Վերջում, ինչպես եւ սպասվում էր, թաղամասի բնակիչները գնահատանքի խոսքեր ուղղեցին Գորիսի համայնքային իշխանությանը եւ մասնավորապես համայնքապետ Առուշ Առուշանյանին՝ տարիներ ի վեր սպասված աշխատանքների կատարման համար:

Հ.Գ.



Արտաշեսյաններ փողոցը խորհրդային տարիներին կրում էր բոլշևիկ Սուրեն Սպանդարյանի անունը:

Նորանկախ Հայաստանի առաջին շրջանում, երբ Գորիս քաղաքը ղեկավարում էր Համլետ Մկրտչյանը, խնդիր դրվեց վերանայել Գորիսի փողոցների անվանումները: Արդյունքում՝ քաղաքի բազմաթիվ փողոցներ նոր անուններ ստացան, որոնք մինչև հիմա գործածության մեջ են:

Նոր անուն ստացավ նաև Սպանդարյան փողոցը:

Ինչո՞ւ Արտաշեսյաններ:

Գորիսի շրջանային «Զանգեզուր» թերթում խնդրի շուրջ այդ ժամանակ տեղի ունեցած քննարկումներից պարզ է դառնում, որ դրանով փորձ է արվել եւս մեկ անգամ շեշտել ու սերունդներին հիշեցնել, որ Սյունյաց աշխարհը մաս է կազմել Արտաշեսյան թագավորական հարստության (մ.թ.ա. 189-մ.թ.1), ինչի արժանահավատության մասին վկայում են նաև Գորիսի ու Միսիանի սահմանագծում դեռևս 1960-ականներին գտնված սահմանաքարերը՝ արամեական արձանագրությամբ:

Դրա անհրաժեշտությունն իսկապես կար, քանզի այդ օրերում նույնպես թուրք-ազերի լծե պատմաբանները սիրողական մակարդակով փորձում էին վիճարկել Սյունիք-Զանգեզուրի պատկանելիությունը:

Ահա այսպիսի նկատառումով էլ Գորիսի քաղաքային իշխանությունը փողոցին շնորհեց Արտաշեսյաններ բարձր անունը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/goris-himnanorogvats-artashesyanner-pokhotsy-qakhaqi-gekhetsik-ankyunnerits-meky-dardzav>

## 12.08.2022 թ.

### Ռրոտան-Խոտ ավտոճանապարհի մի հատվածի շինարարությունը հաջորդ շաբաթ կվերսկսվի. «Ճանապարհային դեպարտամենտ»

Սյունիքի մարզի Ռրոտան-Խոտ ավտոճանապարհի մի հատվածի շինարարությունը հաջորդ շաբաթ կվերսկսվի. «Լուրերին» հայտնել են «Ճանապարհային դեպարտամենտից»:

Սողանքային տեղամասով պայմանավորված՝ նախագծային փոփոխությունների անհրաժեշտություն էր առաջացել՝ հայտնել է կառույցը՝ պատասխանելով հարցին, թե ինչու է արդեն մի քանի ամիս շինարարությունը դադարեցվել:

Սողանքային հատվածը շրջանցելու համար նախագծային աշխատանքներն արդեն ավարտվել են:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3R5P6r1>

## 12.08.2022 թ.

### Ի՞նչ փուլում է Ստեփանակերտ-Գորիս այլընտրանքային երթուղու կառուցումը. անդրադարձ (տեսանյութ)

Ստեփանակերտ-Գորիս այլընտրանքային ճանապարհի նորակառույց հատվածը սկիզբ է առնում Ստեփանակերտ-Բերձոր մայրուղու 36-րդ կմ-ից՝ Բերդաձորի ենթաշրջանի Մեծ շեն տանող խաչմերուկից:

Այս մասին նշված է Արցախի հանրային հեռուստատեսության անդրադարձում՝ Բերձորի միջանցքում կառուցված ճանապարհի և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

Աղբյուրի փոխանցմամբ՝ ավելի քան 21 կմ երկարությամբ և 11 մետր լայնությամբ նորակառույց ճանապարհն անցնում է Մեծ շենով, շարունակվում՝ դեպի Հին շեն, այնուհետև ձգվում մինչև Աղավնո գետի վրա կառուցված կամուրջը:

Ճանապարհի շինարարությունն ադրբեջանական կողմն էր սկսել դեռևս 2021 թվականին և ավարտին հասցրել մեկ տարվա ընթացքում:

ԱՀ քաղաքաշինության նախարարության ճանապարհաշինության քաղաքականության բաժնի պետ Միեր Համբարձումյանի խոսքով՝ լրիվությամբ ավարտված է կահավորումը: Ներկա պահին որոշ տեղերում իրականացվում է կողային առուների կառուցում:

Ավարտին է հասցվել նաև Աղավնո գետի 2 ավերը կապող կամրջի շինարարությունը: Նոր երթուղին կհասնի Սյունիքի մարզի Կոռնիձոր գյուղ, այնտեղից կշարունակվի դեպի Տեղ և կմիանա Գորիս տանող մայրուղուն: Աղավնո գետի մյուս ավիում՝ դեպի Կոռնիձոր, սկսվել է 11 կիլոմետրանոց ճանապարհի շինարարության հողային աշխատանքները, որոնք օգոստոսի 4-ից են ընթանում: Համայնքի ղեկավարը լիահույս է, որ ճանապարհի գործարկումն աշխուժություն կբերի: Ճանապարհաշինարարները խնդիր են դրել 8 ոլորանով միանալ կամրջին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանն էլ Առաջին ավիքի լուրերի հետ զրույցում մանրամասնել է, որ ճանապարհի ընդհանուր երկարությունը շուրջ 11,8 կմ է՝ բաժանված երեք տեղամասի: «Պայմանագրերում նախատեսում են 240 օրում՝ մյուս տարվա գարնան ավարտել ճանապարհի կառուցումը», - հավելել է Գոռ Ավետիսյանը: Ըստ տեղամասերի պատասխանատուների՝ այս փուլում հիմնականում հողային աշխատանքներ են ընթանում:

Նախատեսում են մինչև 2023 թվականի գարնան սկիզբ ավարտել բոլոր աշխատանքները՝ այդ թվում բետոնային: Շինարարությունն իրականացնում է երեք ընկերություն: Շինարարները վստահեցրել են՝ ամեն ինչ կարվի, որ հնարավորինս շուտ շահագործման հանձնվի ճանապարհը:

«Շինարարության ընթացքը լավ է: Սկսել ենք 6 կիլոմետրից՝ նախ հեռացնելով բուսական շերտը: Սպասում ենք լաբորատորիայի պատասխանին, որպեսզի սկսենք լիցքը: Շարժվում ենք ըստ գրաֆիկի: Խոչընդոտ չկա: Սահմանված ժամանակահատվածում կավարտենք», - ասել է «Քարավան» ՄՊԸ-ի աշխղեկ Արմեն Խաչատրյանը:

Մինչև հիմնական այս ճանապարհահատվածի շինարարության ավարտը Արցախ-Հայաստան ճանապարհային կապը կգործի Աղավնոն շրջանցող 4,5 կիլոմետրանոց խճապատ հատվածով, որն այս օրերին վերակառուցում է «Արցախուղի» ընկերությունը:

ԱՀ քաղաքաշինության նախարարության ճանապարհաշինության քաղաքականության բաժնի պետը վստահեցնում է՝ ժամանակավոր ճանապարհը դժվարանցանելի չի լինի. կապահովվի անխափան երթևեկություն ցանկացած մեքենայի համար:

Նոր երթուղով նախօրեին երթևեկել է ԱՀ Անվտանգության քարտուղար Վիտալի Բալասանյանը և քաղաքաշինության ոլորտի պատասխանատուների հետ տեղում ծանոթացել ընթացող աշխատանքներին:

Աղբյուրը՝ <https://artsakhpress.am/arm/news/167821/inch-pulum-e-stepanakert-goris-aylyntranqayin-ertuxu-karucumy%E2%80%A4-andradardz-tesanyut.html>

11.08.2022 թ.

Իրանը գլխավոր հյուպատոս է նշանակել Կապանում

Սյունիքի մարզի Կապան քաղաքում Իրանի գլխավոր հյուպատոս է նշանակվել **Աբեղին Վարամինը**: Այս տեղեկությունը [«Արմենպրես»](#)-ի հետ զրույցում հաստատեցին ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունից՝ նշելով, որ հետագայում կներկայացվեն նաև լրացուցիչ տեղեկություններ այդ մասին:

*Իրանի կառավարությունը 2021 թ. դեկտեմբերի վերջին որոշում էր ընդունել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում գլխավոր հյուպատոսություն բացելու մասին՝ հավանություն տալով Իրանի ԱԳՆ-ի առաջարկին, սակայն հյուպատոսությունը դեռ պաշտոնապես չի բացվել: Տեղեկություններ կան այն մասին, որ հյուպատոսությունը ամենան հավանականությամբ բացվելու է այս տարի՝ 2022 թվականին:*

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1090131.html>

**11.08.2022 թ.**

### **Հայ-իրանական փառատոն Միսիանում**

Օգոստոսի 10-ին Միսիանում տեղի է ունեցել հայ-իրանական մշակութային-խոհանոցային «Նավասարդ» փառատոնը:

Այն կազմակերպել էին Տուրիզմի հայկական ֆեդերացիան եւ «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ-

ն՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ, Սյունիքի մարզպետարանի, Միսիանի համայնքապետարանի, ԻԻՀ մշակութային ժառանգության, ձեռնարկետի եւ զբոսաշրջության նախարարության, ՀՀ-

ում ԻԻՀ դեսպանության հետ համագործակցությամբ:

Փառատոնն իրականություն է դարձել նաեւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի զգալի աջակցությամբ:

Միսակ նահապետի անունը կիրող հրապարակում ու մերձակա փողոցներում տեղադրված տաղավարներում ներկայացված էին հայ եւ իրանական արտադրատեսակներ, ձեռագործ արհեստների նմուշներ, կազմկապերավել էին ազգային խոհանոցներ:

Միջոցառումն ուղեկցվում էր գեղարվեստական համույթների, սիսիանցի ու մայրաքաղաքից ժամանած կատարողների ելույթներով:

Փառատոնի բացման արարողությանը ներկաներին ողջունեցին Միսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ-ում Իրանի դեսպանատան, նախաձեռնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

Միջոցառումը շարունակվում է նաև այսօր՝ օգոստոսի 11-ին՝ «Զորաց քարեր» հնավայրում, որտեղ այցելուները, հեթանոս ժամանակների ավանդույթի համաձայն, կդիմավորեն Նոր տարին՝ Նավասարդը:

Աղբյուրը՝ <https://civic.am/society/37209--.html>

**08.08.2022 թ.**

### **Հայ-իրանական պետական սահմանի հատվածում ստեղծվել է լարված օպերատիվ իրավիճակ. Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչություն**

Հայ-իրանական պետական սահմանի հատվածում ստեղծվել է լարված օպերատիվ իրավիճակ. Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչություն

Վերջին շրջանում հայ-իրանական պետական սահմանի հատվածում ստեղծվել է լարված օպերատիվ իրավիճակ, որը պայմանավորված է Իրանից Հայաստան

թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի (հաշիշ, մեթամֆետամին, հերոին) ապօրինի տեղափոխման փորձերի ավելացմամբ:

Այս մասին «Լուրերին» հայտնել են Հայաստանում Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչությունից:

Նշվում է, որ բացի այդ՝ արձանագրվում են ծայրահեղական և սահաբեկչական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից Հայաստանի պետական սահմանի խախտման դեպքեր: 2021 թ. Մեդրիի սահմանապահ ջոկատի հատվածում ռուս սահմանապահները ձերբակալել են երկու զինյալներ՝ զենքով, նոնականետներով և մեծ քանակությամբ զինամթերքով, որոնք ապօրինի կերպով մուտք էին գործել Իրանից:

«Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կառավարության, Ազգային անվտանգության ծառայության և այլ իրավասու մարմինների հետ համաձայնեցմամբ՝ ընթացիկ տարվա սկզբից կազմավորվել են սահմանային հսկողության ծառայության իրականացման մի շարք կահավորված դիրքեր՝ ընտրողական (իսկ սահմանախախտների որոնման և հետապնդման դեպքում՝ առանց բացառության) միջոցառումներ իրականացնելու անձանց և տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ մաքսանենգության, անօրինական միգրացիայի և այլ իրավախախտումների փաստերի հայտնաբերման, կանխման և խափանման նպատակով: Սահմանային գոտում տեղաշարժվող քաղաքացիներին խնդրում ենք ըմբռնումով մոտենալ իրավապահ մարմինների օրինական պահանջներին», - նշել են Հայաստանում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչությունից:

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչությունը Թուրքիայի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի պետական սահմանի պաշտպանությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության պայմանների մասին» միջպետական պայմանագրի հիման վրա, որը ստորագրվել է երկու երկրների միջև 1992 թվականին:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3Rq8tuC>

**08.08.2022 թ.**

### **Մեդրի-Ազարակ ճանապարհին շուրջ 9 ամիս է՝ ռուս սահմանապահները մոդուլային հենակետեր են տեղադրել. համայնքի ղեկավար**

Շուրջ 9 ամիս է՝ Մեդրի-Ազարակ ճանապարհին տեղադրված են մոդուլային հենակետեր, որտեղ ռուս սահմանապահները ծառայություն են իրականացնում «Պետական սահմանի» մասին օրենքի համաձայն: Այս մասին [NEWS.am](https://www.news.am)-ի հետ զրույցում ասաց Մեդրի համայնքի ղեկավար Բազրատ Զաքարյանը՝ չնշելով սակայն, թե ինչ նկատառումներից ելնելով են տեղադրված այդ հենակետերը:

«Կիսնդրեմ այդ մասով դիմել համապատասխան գերատեսչություններին, ես որպես Մեդրի համայնքի ղեկավար կարող եմ ասել, որ այդ մոդուլային հենակետերը տեղադրված են 8-ից 9 ամիս: Ռուս սահմանապահների ծառայությունը իրականացվում է Հայաստանի եւ Ռուսաստանի համատեղ ստորագրած փաստաթղթերի հիման վրա: Այդ սահմանային գոտում սահմանահատումներ են լինում, ռուսական սահմանապահ զորքերի նշանակությունը հենց դրա համար է», - ասաց համայնքապետը:

Համայնքապետի խոսքով՝ սա նշանակում է, որ քաղաքացիները իրենց հետ պետք է ունենան անձնագիր, որպեսզի հարկ եղած դեպքում ցույց տան դրանք ռուս սահմանապահներին, որից հետո միայն կարող են անցնել հենակետը:

Բագրատ Ջաքարյանի խոսքով՝ ամեն անգամ չէ, որ ռուս սահմանապահները ստուգում են քաղաքացիներին, բայց լինում են դեպքեր, երբ մեկ ժամից ավելի քաղաքացիների տեղաշարժը դադարեցվում է, ինչն, իհարկե, զայրացնում է բնակիչներին:

Արբյուրը՝ <https://news.am/arm/news/715328.html>

**02.08.2022 թ.**

**Սյունիքի Դավիթ Բեկ բնակավայրում իրականացվում են ականազերծման աշխատանքներ. Ինչ է հայտնաբերվել**

Ս.թ. հուլիսի 18-ից «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը սկսել է Սյունիքի մարզի Դավիթ Բեկ բնակավայրում մարտական գործողությունների հետևանքով աղտոտված տարածքների մաքրման աշխատանքները:

Հուլիսին Դավիթ Բեկ համայնքում մեր մասնագետները մաքրել են 22 000 քմ տարածք: Աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 1հատ 85 մմ տրամագծով, 3 հատ 100 մմ տրամագծով արկեր և զրահապատ արկի միջուկ:

Արբյուրը՝ <https://news.am/arm/news/714316.html>

Կազմող՝ Ս. Ալավերդյան